

2714

2714 108.
I

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ

1909 ՏԱՐԻՈՅ ԵԼԵՒՄՏԱՑՈՅՑԸ

ՅԱՐԱԿԻՑ ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՎ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԵՆ

ՄԱՏՈՒՑՈՒԱԾ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

1909 Օգոստոս 21ի Խթ. Այսիհետև



Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱ.ԴՐ. Յ. Ա.Ս.ՏՈՒՐԵԱՆ ԵԽ ՈՐԴԻՔԻ

1909



14255

ՄԱՅՐ ԴԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Մինսս	կֆ. Զերազ	Ա. Ատենապետ	Հրաման	կֆ. Ասատուր	Ա. Ատենադպիր
Տօֆ. Կահրամ	» Թորգումեան Բ.	»	Հայկ	» Խօնասարեան Բ.	»
Գեղրդ	» Ալանեան Գ.	»	Յովհաննես	» Հինդեան Գ.	»

ՆԱԽԱԲՆԻՉ ԴԻԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԶԵՐՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԱՆԱՆ

Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմախնեան (Ատենապետ)	Վահան	կֆ. Էսաեան (Ատենապետ)
Լեռն կֆ. Սաարմեան	Տովհաննես	Տօֆ. Կարապետ » Մուրափե. (Ատենադպիր)
Նշան » Ճիվանեան	Յովհաննես	» Խազուլեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԱՆԱՆ

Յովհաննես կֆ. Հինդեան (Ատենապետ)	Տ. Մկրտիչ Եպիսկ. Վեհապետեան (Ատենապետ)
Ռուրիկ » Զարդարեան (Ատենադպիր)	Ռուրիկ կֆ. Փախազեան
Յովսկի » Գույումեան	Ստեփան » Կուրտիկեան

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԱՆԱՆ

Վոամշապուհ կֆ. Մանուկեան (Ատենապետ)	Հմայեակ կֆ. Արամեանց (Ատենապետ)
Արիստակ » Գասպարե. (Ատենադպիր)	Խենդիր » Սիմոնեան (Ատենադպիր)
Արամ » Հաղամեան	Յակոբ » Պահրի

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԱՆԱՆ

Իօննկ կֆ. Տէրումեան (Ատենապետ)	Բիւզանդ կֆ. Քեյեան (Ատենապետ)
Բիւզանդ » Պօղամեան	Հայկ » Խօնասարեան
Խորիկ » Ճամեան	Մելիքն » Կիւրճեան

ԵԼԵՒՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Արիստակ կֆ. Գասպարեան (Ատենապետ)	Արիստակ կֆ. Գալազեան (Ատենադպիր)
Ղազարու » Զալազեան	» Փախազեան (Գանձապետ)
Պարգեւ » Փախազեան	» Տէրումեան (Մատակարար)
Օննիկ » Տէրումեան	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԱՆԱՆ

Վահան	կֆ. Էսաեան (Ատենապետ)
Տովհաննես	Տօֆ. Կարապետ » Մուրափե.
Յովհաննես	» Խազուլեան

ԽՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԱՆԱՆ

Հմայեակ կֆ. Արամեանց (Ատենապետ)	Տ. Մկրտիչ Եպիսկ. Վեհապետեան (Ատենապետ)
Խենդիր » Սիմոնեան (Ատենադպիր)	Խենդիր կֆ. Բագրիկի
Յակոբ » Պահրի	» Կուրտիկեան

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

1909 ՏԱՐԻՈՅ ԵԼԵՒՄՏԱՑՈՅՑԸ

ՅԱՐԱԿԻՑ ՏԵՂԵԿԱԳՐԵՐՈՎ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Վահանաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Ազգային կեղրոնական վարչութեան Քա-
ղաքական ժողովս ընդ գրոյս կը մատուցանէ
կեղրոնական Սնտուկի ներկայ 1909 տարոյ
մատակարարութեան համար Տնտեսական Խոր-
հրդոյ կողմանէ պատրաստուած ելմտացոյցի
պատճառաբանեալ տեղեկագիրն և յարակից
օրինագիծն ու պատկերները, Ազգային Պատ-
կառելի ժողովոյ քննութեան ենթարկուելու
համար:

Տնտեսական Խորհրդոյ աշխատութիւնը
թերեւա առաջինն է մեր Ազգային Սահմանադրու-
թեան ոնյն 46րդ յօդուածի 7րդ հատուածի
մէջ յիշատակուած են և ենթարկուած Ծն-
տեսական Խորհրդոյ անմիջական ու վերին
հակողութեանը:

Այս նախահաշուքի մէջ ոչինչ կայ պատ-
կերացուած կտակներու, Թաղ. Խորհուրդ-
ներու մատակարարութեանց, և հետեւարար
ուսումնարաններու վերաբերեալ ելմտական
վիճակի մասին՝ որք Ազգային Սահմանադրու-
թեան ոնյն 46րդ յօդուածի 7րդ հատուածի
մէջ յիշատակուած են և ենթարկուած Ծն-
տեսական Խորհրդոյ անմիջական ու վերին
հակողութեանը:

Քաղաքական ժողովը պարտ կը հա-
մարի խոստավանիլ թէ՝ ներկայացուածը ոչ
թէ իւր ընդհանուր ելմտացոյցն է, այլ անոր
մէկ մասը, որ կը պարունակէ Պատրիարքա-
րանի շրջափակին, անոր պաշտօնէութեան և
Դիւանական ծախուց ու ենթարկական մտից
նը ամբողջովին չիրագործելու մէջ:

Տնտեսական Խորհուրդը՝ հիմնուելով մօտ
կէս դարու Վարչական-Տնտեսական մարմին-
ներու ելմատական ըմբռնողութեան, աւան-
դութեան, ի գործ դրսւած հսկողութեան,
կազմուած նախահաշիւներու և արձանագ-
րութեանց վրայ, սահմանափակուեր մնացեր
է նոյն սահմաններու մէջ, աւելցնելով իւր
կողմէ խղճամիտ աշխատութիւն՝ ենթադրա-
կան նախահաշիւը մօտաւորագոյնի վերածե-
լու, և առաջին անգամն ըլլալով այդ ելմը-
տացոյցի մի օրինագիծ կազմելու համար:

Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովը՝ իւր ընտրութեան առաջին օրէն իսկ, նպատակ ընտրեց Սահմանադրութեան գծած պարտաւորութիւնները իւր բովանդակ լայնութեամբը, իւր ոգւոյն համաձայն ըմբռնել, այդ ըմբռնումի գործադրութեան ամբողջ պարտականութիւնը ընդգրկելով սահմանել, անկապ ու անշղթայ վարչական մեքենան լծորդել, ապակեդրոնացեալ շրջաններու և մարմիններու միջեւ փոխադարձ յարաբերութեան, յանձնառութեան և պարտականութեան այնպիսի շաղկապում մը ստեղծել, որ ինի իրական պատկերը Ազգային Ելմտական տնտեսութեան՝ առ բարձրագոյն վերահսկիչն ու համարառուն՝ Ազգային Ընդհ. Ժողովն:

Քաղաքական ժողովը ա'յն համոզումն
ունի՝ որ յարակցութեանց, շղթայումի այդ
ընդհանուր պատկերը չի կրնար գոյութիւն
ունենալ՝ առանց Ազգային Սահմանադրու-
թեան նախաբան պաշտօնական յայտագրի
Զ.քդ և է.քդ յօդուածներով սահմանաւոր-
ուած դասաւորութեամբ, աստիճանական հա-
մարատուութեամբ, գաւառական և կեղրո-
նական ընդհանուր համարատուութիւնը Ազ-
գային հնդհանուր ժողովոյ առջեւ կեղրո-
նացած լինելու :

Ազգային բոլոր մարմիններու պարտաւորութեանց ամբողջութիւնը երկու ընդհանուր գիծ ունի. — Եկեղեցական ու կրթական։ Այս երկու ճիւղերն եւս ենթակայ են տնտեսական-ելմտական մատակարարութեան։ Եկեղեցական-կրթական բարւոք վարչութիւնը անխուսափելիօրէն պայմանաւորուած է և կախում ունի տնտեսական-ելմտական մատակարարութիւններէն։

Ազգային Բարձրագոյն համարառու մարմ-
նոյն՝ Ընդհանուր Ժողովոյ համարառութիւնը
անսուանական կը լլայ, ինչպէս եղած է ցարդ,
թիէ այդ համարառութիւնը կանխաւ պայ-

Մանադրուած չըլլայ օրոշ յանձնառութիւններով և պարտադրութիւններով :

Սցդպիսի յանձնառութեանց և պար-
ուագրութեանց էութիւնը կը կազմէ բոլոր
յահմանագրական վարչութեանց համար՝
նշմացոյցը, որուն նախագիծը անպայման
կենթարկուի ժողովրդեան ներկայացուցիչ
ըրեսփոխաններուն՝ Ազգային Բնդհանուր ժո-
ղովոյ վճռոյն:

Առանց այդպիսի վճռուած և Երեսփոսանութենէ Նախասահմանուած ելմտացոյցի, սնննար է ենթադրել որ Բարձրագոյն հեղիակութիւնը իրականապէս հնարաւորութիւն լւնենայ համարառու լինելու, և պատասխաւատութիւնները ձգելու:

Սահմանադրական ընթռնումի պակասը ,
աբելոնական անկարգութեան , համարատու-
թեան խուսափումի և սանձարձակ ան-
շարտածանաշութեան նույիրագործումն՝ են-
թադրել կուտայ թէ՝ ամբողջ Թրքահայու-
թիւնը ներկայացնող Հայոց Ընդհանուր Ժո-
ռով հիմնուած ու կոչուած է միմիայն Պատ-
րիարքարանի շրջափակին մէջ գանուող պաշ-
օննէութեան ու Դիւնական ելեւմտից հար-
ումն զբաղելու , Ազգային Ելմտացոյց ըսելով
միմիայն Պատրիարքարանի պաշտօնեայներ և
իւան հասկընալու , յորմէ դուրս կը մնան
զգային բոլոր հաստատութիւնները , որոնց
մնթէպ Կեդրոնական Սնառուկը ո՛ եւ է յանձ-
առութիւն և իրաւունք չպիտի ունենայ :

Էնդհակառակն ունի և պէտք է ունենայ :
Վերջապէս ժամանակ է որ մեր Ազգա-
ն հաստատութեանց տէր ըլլանք, և Ազ-
ային Բարձրագոյն իշխանութիւնը իրակա-
սպէս ի գործ զնէ իւր հակակլոփի քննու-
եան իրաւունքը :

Այդ նպատակին հասնելու համար կը պակ-
ին հրահանգներ՝ որոնք նոյնպէս բլխած
լլային կերպունական վարչութեան յանձնա-
ւթիւններէն և Ազգային Ընդհանուր ժո-
վոյ կամքէն :

Այդ կարգի հրահանգներու ուսումնարութեամբ պատրաստութիւնը մեր էն կաւոր աշխատութեան և գործունէութեանը պիտի կազմէք :

Մենք կատարեցինք այդ աշխատութիւն : Պատրաստ են հրահանգները, որոնց մասն վարչութեան վերջնական քննութիւնն որոշումները պիտի փութացուին, և այդ ահանգներուն Ազգային Բարձրագոյն հեղինակութեան վաւերացումն ստանալէ լիտու .

ՄԱՏՈՒՅՈՒԱԾ ԱԶԳ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Կը հաւատանք թէ՝ Ազգային մարմինները և
նարաւորութիւն պիտի ունենան հասնելու
րենց պարտականութեանց բարձրութեանը, Ս
գային ժողովոյ առջեւ պատկերացած պի
ըլլան Ազգի բազմամիլիոն նիւթական տնա
սութեան աւերումներն և այդ ժողովը հ
նարաւորութիւն պիտի ունենայ նաեւ պա
տաշը բարձրութիւններ սահմաններ այդ փլատակնե
վերաշնելու համար :

Արտակարգ և բացառիկ դէպքեր՝ որոնց յիշատակութիւնն աւելորդ է ընել այս տեսանկանին այնպիսի հոգեր, որոնք պատճառ եղան ընդհատելու և դանդաղեցնելու վայրէութեան ձեռնարկած վերոյիշեալ աշխատութիւնները :

Այդ պատճառաւ է որ Վարչութիւն
հնարաւորութիւն չունեցաւ Ընդհանուր Ելմի
տացոյց մը ներկայացնել այժմ։ Այդ պատ
ճառաւ է որ նոյն իսկ այս ներկայացուա
սահմանափակ նախահաշիւը չկարողացան
ներկայացնել իւր ժամանակին։

Քաղաքական ժողովը այս կարծիքէն է
թէ Ընդհանուր Ժողովը այս նախահաշիս
պիտի նկատէ ո՛չ իբրև տարեկան ընդհանուր
պիտի այլ անոր մէկ մասնիկը և ժամանակաւորը, որու զօրութիւնը կը դադրի ա՛յ
վայրկեանէն՝ երբ հնարաւոր կըլլայ ներկա
յացնել և վաւերացնել մի ընդհանուր ելմը
տացոյց :

Մասմբ յարդանօք
 Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչութեա
 Քաղաքական ժողովոյ
 Բ. Ասենադպիր Ասենապէս
 Մ. Շիրնեւս Ս. Գրաբելս

23 Յունիս 1909

ԱՄԵՐԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԱԳՐԸ

ԵՐԱԾՈՒՅՆ

Ա. Կեդունիկովի Անձնագիր

1909 ՏԱՐԻՆՑ ՊԻՒՏՏԱԲ

1. — ԸԱ.Ռ.Ա.ԶԱ.ԲԱ.

Տնտեսական Խօրհուրդու իւր պաշտօնաւ վարութեան առաջին օրէն իսկ Ազգ. Կեղրոնական Սնառուկին վիճակը, Պատրիարքարանի Ելեւմուռաքի Կարեւոր խնդիրը և անոհաւասարակշռութիւնը իւր լուրջ ուշադրութեան առարկայ բրաւ:

Սյս կնծոռոտ գործին ծանրութիւնը քաջ
գիտնալով՝ Խորհուրդս չուզեց յախուռն ա-
ռաջարկութիւններով և կամ անհիմն ծրա-
գիրներով զբաղիլ, այլ կարեւոր նկատեց
մանրամասն քննութեամբ լաւ մը ուսումնա-
սիրել հասութից զանազան աղբիւրները, դը-
րական և գործնական կերպով ճշգել անոնց
արդիւնաբերութիւնն ու առաձգութիւնը,
ստուգել ծախուց գլուխիները և վերջապէս
հաստատել թէ ներկայ վիճակին մէջ ի՞նչ աս-
տիճան խնայողութեան կամ նուազման կըր-
նային ենթարկութիւնը ծախքերը, ոչ թէ Պատ-
րիսարքարանի ելքին և մուտքին միջեւ հա-
ւասարակշուռութիւն մը ձեռք բերելու հա-
մար, զի այս բանը տարիներէ ի վեր անկա-
րելի դարձած էր, այլ միայն սովորական ե-
ղած բացը կարելի եղածին չափ թեթեւցնե-
լու նպատակաւ :

Ստոյգ է որ Խորհուրդս իւր առջեւ ու-
նէր նախորդ Պատրիսարք Օրմանեան Արքա-
զանի պատրաստած ուժամեայ և երկամեայ
մեծարժէք տեղեկագիրները, բայց պէտք չէ
մոռնալ թէ առնոց հրատարակութենէն ի վեր
արմատական փոփոխութիւններ տեղի ունե-
ցած էին թէ՛ երկրին վարչական ձեւին և թէ՛
Թուրքիոյ և ի մասնաւորի ազգիս տնտեսա-
կան վիճակին մէջ, փոփոխութիւնք որ չէին
կրնար Պատրիսարքարանի հասութից վրայ ալ
իրենց ազգեցութիւնը զգացնել չալ :

Արդարեւ, վերոյիշեալ տեղեկագիրներով մենք կունենայինք 1897 Յունուար 1էն մինչ 1904 Դեկտեմբեր 31 և 1905 Յունուար 1է մինչ 1906 Դեկտեմբեր 31, ընդամենը տասը քիչ շատ կանոնաւոր տարիներու հասութից և ծախուց միջինները, բայց ցորչափ 1907 և 1908 շրջաններու վարկերու նախատեսութեանց իրականացած ելից և մտից թիւերը մեզ կը պահսէին, ասոնք անբաւական էին մեր գործն ի դրուիս հանել տայու:

Պարտաւոր Էինը մասնաւորապէս 1908ի
արդիւնքները ձեռքբերնիս ունենալ, վասն զի
այս տարուան մէջ յեղաշրջում մը տեղի ու-
նեցած էր, մինչդեռ ասոր առաջին կէօին
մէջ երկրը իւր անկեալ՝ բայց սովորական
վիճակը ունէր, երկրորդ կէսին մէջ հիմնա-
կան կերպարանափոխութիւն մը կրած էր,
որով՝ քանի մը հասութից աղբիւրներ՝ որոնք
արդիւնք մը կ'արտադրէին առաջին վեցամ-
եային մէջ, երկրորդ կէսին մէջ արդիւնաւոր
ըստաէ ռառուած էին:

Սպասաեցինք ուրեմն 1908 տարւոյ արդեանց, երկու որոշ շրջաններու բաժնելով զայն, մին՝ Յունուար 1էն մինչ 30 Յունիս, և միւսը՝ Յուլիս 1է մինչեւ 31 Դեկտեմբեր։ Ասոնց մանրամասնութիւնները ձեռք բերելու համար հարկ եղաւ հաշիւներու փակման սպասել և երկու ամիս ալ այսպէս անցյալ ու հասանք ներկայ տարւոյ Մարտի սկիզբները, որով առիթն ունեցանք մեր հետազօտութիւնները անցեալ Յունուար և Փետրուար ամիսներու վրայ ալ տարածել ու այս մի քանի շրջաններու իրականացած արդիւնքներով գոնէ վերջնական միջիններ հաստատել և ըստ այնմ կազմակերպել 1909ի պիւտեմբէն։

Հօս կէտ մ'ալ կը ներկայանայ որուն
վրայ կուզենք մէկ երկու խօսք ընել, թի-
ւերու մանրամասնութեանց մտնելէ առաջ.
թէեւ նոր պիւտաճէն, ըստ ընկալեալ սովո-
րութեան, ամբողջ տարրուան մը համար,
այսինքն Յունուար 1է մինչեւ Դեկտեմբեր 31
սահմանուած է, բայց ինչպէս պիտի տեսնուի,
այս տարեշրջանին երկու ամիսները արդէն
անցած ըլլալով՝ գործն ինքնին պիւտաճէի մը
յատկանիշն եղող միօրինակութեան և ամփոփ-
ման տեսակէտով առարկութիւն կը վերցնէ.
դժբաղդաբար ասոր դարման մը գտնել կա-
րելի չէր, քանի որ տարւոյն երկրորդ կէտին
մէջ տիրող անիշտանական կացութիւնը թոյլ
չէր տուած, ուրիշ տեղեր եղածին պէս առ-
ժամանակեայ ամսական վարկերու (douzième
provisoire) դրութեան դիմել: Այսու հանդերձ
այս մասին պարտուպաշաճը ներկայ տեղե-
կագրին կցեալ Պիւտաճէի Օրինագծին մէջ
սահմանուած է:

2. — ՀԱՅՈՑԹԻՔ

Ըստ թիւ 2 բաղդատական ցուցակի
կեդրոնական Մնառուկի մինչեւ 31 Դեկտեմբեր
1906, մայիս միջինը եղած է դր. 520,700.
Ըստ թիւ 3 ցուցակի՝ 1909 ելմտական տար-
ւոյ համար մեր նախատեսութիւնն է ընդա-
մէնը դր. 410,000. որուն մանրամասնու-
թիւնները հետեւեալներն են:

1. Ազգային Տուրք. — Այս հասոյթը զոր կրնանք ուղղակի հասոյթ յորջորջել, իրաց արդի կերպարանափոխեալ վիճակին մէջ գրեթէ մեր միակ յօյտն է, քանի որ, ինչպէս յայտնի է, ուղղակի առուրքերը ամէն

աղքերու պիւտնէներուն հաստատագոյն հիմները կը կազմեն : Մինչդեռ անուղղակի տուրքերը կապուած ըլլալով պատահականութեանց, և երկրի մը տնտեսական վիճակին, անոր ներքին և արտաքին քաղաքականութեան, յաճախ մեծամեծ տարբերութիւններու ենթակայ են, դժուարութեանց և զանազան ուսագործութիւններու համար հետեւանոք : Ուղղուակի տուր-

սազան դիմում առաջարկութեան համապատասխան է և ըստ այս գործ իրենց մասնաւոր հանդգամանք քովը և ուրոշ նկարագրովը նուռազ ենթադրական ըլլալով շատ ելեւէջներու տեղի չեն տար : Արդ՝ եթէ Կարելի ըլլար դիւրին և միանդամայն վստահ միջոցներով անոնց գանձումը ապահովել՝ մեր ազգային սնտուկին պիտածէի հա-

ւասարակուութիւնը այլեւս մեզի մտահոգութիւն պատճառելէ կը գաղրէր։
Ազգային տուրքը որ 1902—1903ին
130,000 դր․ի հասոյթ մը տուած է, զանազան պատճառներու բերմամբ հետզհետէ նուազելով՝ վերջապէս 1908ին **72,750** և 1909ի առաջին երկու ամիսներու մէջ ալ **13,000** դր․ բերած է, ինչպէս կը տեսնուի թիւ 2 բաղդատական ցուցակին մէջ։ բաց աստի մինչդեռ 1908ի առաջին կէօին մէջ այս գըլխէն **52,450** դր․ի մուտք մը գոյացած է, Սահմանադրութեան հոչակումէն ետքը, երկրորդ վեցամսեայի մէջ, միայն **20,300** դր․ գանձուած է։ Այս նուազման պատճառները թուել կարի երկար պիտի ըլլայ, միայն սա ըսենք թէ ազգայնոց անտարբերութենէն զատ գանձման եղանակին ստէպ ստէպ փոխուիլն ալ պատճառ եղած է այս հասոյթին ամլութեան։

Բատ այսմ, ազգային արագ միջինն 79,917
դր. եղած ըլլալով՝ մեր կողմէ ալ 1909
տարւոյ համար 80,000 դր. է աւելի մուտք
մը կարելի չէ նախատեսել։ Միւս կողմէ
Ելեւմտից Հոգաբարձութիւնը այս տուրքը¹
հաւաքիչներու ձեռօք գանձելու դրութիւնն
հաստատած ըլլալով՝ թէեւ հասոյթին 15 %,
այսինքն վերոյիշեալ գումարին վրայ 12,000
դր. անոնց վճարել հարկ պիտի ըլլայ, որպէ

այս հասոյթին գուտ գումարը 68,000 դրչ. ի
կ'իջնալ, բայց նկատելով որ գանձումները
ասկից ետք աւելի մեծ աշխայժով և յարա-
տելութեամբ պիտի կատարուին, սիալած
չենք ըլլար եթէ մօտաւորապէս 13,000 դրչ. ի
յաւելմամբ այս հասոյթը վերը ըստածին պէս
80,000 դրչ. սահմանինք:

մարի մը հասնիլ, այս մասին հաստատ հաւատք ունինք: Եթէ անոր գանձման համար վերջնական, լուրջ և ամփոփ եղանակ մը կարող ըլլանք որոշել՝ տարակոյս չկայ որ լաւագոյն արդեանց պիտի տիրանանք, և սա պիտի կազմէ Պատրիարքարանի պիւտճէին հաւասարակշռութիւնը ապահովող գրեթէ միակ աղբիւրը:

Առ այս կը կարծենք որ առանց ժամանակ կորսնդելու պէտք է՝

Ա. Ամէն ազգայինի համոզում գոյացնել
տալ թէ քիչով կամ շատով պարտի Պատրի-
արքարանի ծախուց մասնակից ըլլալ, վասն
զի անոր գոյութիւնը ազգային կենդանու-
թեան միակ յատկանիչն է և մէն մի Հայու
անհատական, ինչպէս նաեւ ամբողջ ազգին
հաւաքական շահերը կը պահանջեն որ ազգա-
յին արժանապատուութեան յարմար Պատրի-
արքարան մ'ունենանք և անոր տանք ազգին
իրաւունքները պահպանելու և պաշտպանե-
լու նիւթական միջոցները :

Բ . Պարզել իրաց վիճակը ազգային թեր-
թերու արտօնատէրներուն և խմբագիրներուն
և հրաւիրել զանոնք որ այս մասին յօդուած-
ներ հրատարակելով յորդորներ կարդան և
շարժում մը ստեղծեն և արծարծեն ազգին
մէջ :

Գ. Աղգային տրոց ամէն դասակարգի
դիւրամաչելի նոր բաշխում մը կատարել,
և 10 դրւ. էն օկտեալ մինչեւ 200 դրւ. նոր
աստիճանաւորում մը պատրաստելով՝ Երես-
փոխանական ժողովոյ քուէարկել տալ և ան-
յապաղ գործադրութեան դնել :

Դ. Մայրաքաղաքի մէն մի թաղի մէջ
կարեւոր անձերէ բազկացեալ Մասնախումբեր
կազմել, պաշտօն տալով անոնց՝ թաղեցոց
հետ բանակցիլ և ամէնուն հաւանառութիւնը
կանխաւ ստանալէ ետք՝ ցուցակագրութիւն
մը կատարել, տուրքերը բաշխել և գան-
ձումներն ընելով դրամները ամէն ամիս
Պատրիարքարան դրկել :

2. Մալքարս. — 1902ի վերջին վա-
ւերացեալ բաշխմամբ 53,400 դր. սահման-
ուած էր, բայց հայաբնակ գտառներու խեղճ
վիճակին և անցած տարիներու տնտեսական
սաստիկ տագնապին հետեւանօք այս հասոյ-
թը գրեթէ 50 % նուազում մը կրած է:
Հստ թիւ 2 ցուցակի, 1908 տարւոյ մէջ այս

զլիսէն մօտաւորապէս 14,400 դրուշի արդիւնք
մը գոյացած է, մինչդեռ ներկայ տարւոյ ա-
ռաջին երկու ամիսներու հասոյթը միմիայն
1,500 դր. եղած է, որով ներկայ շրջանին
համար ալ այս գլուխը կրնայ 20,000 դր. ի-
չափ հասոյթ մը տալ, առկախ մնացած հաշ-
ուակցական բոլոր գործողութիւնները աւար-
տելու պայմանաւ :

Ամէն պարագայի մէջ, յետնեալներու ինչ-
պէս նաեւ այս տարուան մուգաթայի գան-
ձումն ապահովելու համար պէտք եղած հե-
տապնդումները շարօննակելու է, վճարելու
կարող թեմերէ իրենց պարտուց կարգադրու-
թիւնը պահանջելով. իսկ անկարող թեմերու
հաշոց կարգադրութիւնը լաւագոյն ժամա-
նակներու վերապահելու ստիպուած ենք:

3. Քանչէկեր. — 1908ի մէջ սիմիայն
15,248 դրշ. տուած է, մինչդեռ 1902ի վա-
ւերացեալ բաշխմամբ մօտաւորապէս 37,836
դրշ. կ'ակնկալուէքը. ներկայ տարւոյ առաջին
երկու ամիսներուն մէջ այս գլխէն գանձում
է եղած :

Այսուհետեւ թաղական լորու ռազմական գումարը կազմում է 28,000

ՊՐԵ · Կրտսանք նախատեսնել :

Միայն թէ նկատելով որ Թաղական Խոր-
հուրդները իրենց պարտուց ժամանակին վե-
ճարման մասին շատ անհոգ կը գտնուին, լաւ
կ'ըլլայ եթէ վարչութիւնը անսնց ուշադրու-
թեանը հաս եւելու Առա Կեռա Անորու ինք

անձուկ վիճակին վրայ՝ քանզէլէրի տրոց առաջման անմիջական պէտքը զգացնէ :

4. Նշանութ : — 5. Հրամանի . — Այս երկու աղբիւրները 1908ի առաջին կէսին մէջ՝ 15,155, երկրորդ կէսին մէջ՝ 18,594, իսկ 1909 երկու ամիսներուն մէջ՝ 7,200 զրու տուած են ինպէս լաւանի է առուեն, աւա տուորմի

մէկ մասը (65%) գրեթէ քահանաներու մէկ մասը (13%) Ազգ. Հիւանդանոցի, միացած մասն ալ (22%) Պատրիարքարան յատկացուած է. որով այս գլուխիներու զուհասովթը նոյն համեմատութեամբ կը պակսի

հաշուական կնծռոտութեան, կեդրոնական ամարակալութեան աւելորդ անցքերու, հակակչութիւնը գուարութեան և խել մը անօդու

աշխատութեանց տեղի տալով։ Այս մասին կ'առաջարկենք դադրեցնել Հիւանդանոցի մասնակցութիւնը, որ նպաստի ձեւով կը տրուի մինչեւ ցարդ, քանի որ արդէն Պատրիարքարանի պիւտճէն բաց ունենալուն համար չկրնար օգնել ուրիշ ու եւ է հաստատութեան և իր հասոյթներէն բաժին հանել անոր։ իսկ միւս կողմէ քահանայից բաժնին գանձումն ալ պէտք չէ այլեւս Պատրիարքարանը ինք ստանձնէ, քանի որ ծխառէրերու և քահանայից միջեւ կատարուելիք գործողութիւն մէն, և Պատրիարքարանի միջամտութիւնը կը վնասէ ուղղակի իր հասութից, վասն զի ծխառէրք իրը Պատրիարքարանի տուրք կը վճարեն այդ գումարները, մինչդեռ քահանայից կը վերաբերին անոնք։ Այս պարագային մէջ, վերոյիշեալ գլուխներէն վստահաբար 43,000 դր.ի հասոյթ մը կրնանք նախատեսել։

Ելեւմտից Հոգաբարձութիւնը թէեւ այս արոց ջնջումը կը ջատագովէ, սակայն ներուի մեզ դիտել տալ թէ արդէն վկայուած անկարող ազգայինք զերծ են ու կը մնան միշտ այս արոց վճարումէն։ Շատ աւելի յառաջադէմ և լուսաւորեալ ազգերու մէջ արձանագրութեան տուրքէ զատ Եկեղեցական ամուսնութիւնք ծանր ծախքերու ենթարկուած են։

Կեդր. Սնտուկի հասութից անբաւականութիւնը կ'արգիւէ զմեզ գոնէ առ այժմ այսպիսի առաջարկութիւն մը ընելէ կամ յանձնարարելէ։

6. Կալուածական առուծախ։ — Այս գլուխը ամենէն գոհացուցիչ արդիւնք տուողըն է։ 1908ի մուտքը 165,462, իսկ 1909ի առաջին երկու ամիսներու արտադրութիւնը մօտաւորապէս 22,363 դր. եղած է։ Տարակայո չկայ որ եթէ նոր Վարչութիւնը կամ ըէժիմը անփոխու պահէ Պատրիարքարանի առանձնաշնորհումները՝ հասութից այս աղբիւը՝ երկրին անտեսական վիճակին բարձրագում աւելի արդիւնաբեր պիտի ըլլայ։ Ամէն պարագայի մէջ, առ այժմ և մինչեւ ցոր անօրինութիւն կեդր. Սնտուկը պիտի շարունակէ պահանջնել այս տուրքը, որով կրնանք այս գլխին ալ ընթացիկ շրջանին մէջ 150,000 դր.ի գանձում մը նախատեսել։

7. Վաւերացմունիք։ — 1908ի գանձումները 26,439 դր. մինչդեռ 1909 Յունուարի և Փետրուարի մէջ մուտքը հազիւ 755 դր. եղած է։

1908ի արդեանց մեծագոյն մասը, այսինքն 19,445 դր. առաջին կէսին մէջ իրականացած է, և այս ալ կտակներու վաւերացման գործողութիւններէ։ Ուրեմն, ինչպէս նախորդ շրջաններու մէջ՝ նոյնպէս ալ այս տարի ասկից 20,000 դր.ի չափ մուտք մը նախատեսել կարելի է։

8. Անցագիր։ — Այս գլխին 1908ի առաջին կէսին հասոյթը 9,144 դր. իսկ նոր րէժիմը սկսելէն անմիջապէս դր. այսինքն Յուլիս և Օգոստոս ամիսներու մէջ բոլորովին դադրած է։ որով չենք կարծեր որ իրաց արդի վիճակին մէջ իրաւունք ունենանք ասկից որ եւ իցէ մուտք մը յօւսալ։

9. Պահուածութիւնը։ — Վաւերացման գլխուն մէջ նշանակուած պատճառներու բերմամբ՝ 1908ի մուտքը 11,993 դր.ի, իսկ 1909ի երկու ամիսներունը 1,000 դր.ի բարձրացած են. ըստ այօմ այս աղբիւը ալ ։ նկատելով որ այժմ թաղերը իրենք ապել կուտան նուրիատուութեան նամակները, զորս հին ըէժիմին ժամանակ Պատրիարքարանէ կը գընէն — մօտաւորապէս 6000 դր.ի եկամուտ մը կրնանք նախատեսել։

10. Վագֆ։ — 1908ի մուտքը 8,253 դր., իսկ ներկայ տարւոյ երկու ամիսներու արդիւնքը միմիայն 527 դր. եղած է։ Այսուհանդերձ կը յօւսանք որ ինչպէս միշտ՝ նոյնպէս ալ այս տարի հասոյթը իրմէ սպասուած 9300 դր.ի մուտքը այս։

11. Զանազանիք։ — Այս գլխուն հասոյթը քահանայից կողմէ՝ նշանատուութեանց ատեն իրենց սեփական բաժնին գանձմանը համար՝ կեդր. Սնտուկին վճարուած տասան նորդներէ և բանտարկելոց ի նպաստ եղած նուրբներու մուտքէն կը բաղկանայ։ 1908ի մէջ միմիայն 9,576 դր., իսկ ներկայ տարւոյ երկու ամիսներուն մէջ ոչինչ արտադրած է, որով չենք կարծեր որ կեդր. Սնտուկը կարենայ ասկից օգտուիլ, քանի որ մէկ կողմէն մտածը միւս կողմէն կ'ելլէ մասամբ զանազան ծախուց գլխով։ Ուրեմն այս գլխին ալ 7,895 դր. կը նախատեսենք։

12. Պետական տեղորի։ — 1908ի արտադրութիւնը 95,734 դր. եղած է, մինչդեռ նախորդ արբիներու միջինը 104,867 դր.ի ալ բարձրացած էր։ Թէեւ ստոյդ աղբիւը առնուած տեղեկութեանց համաձայն՝ Ելեւմտից Նախարարութիւնը նոր պիւտճէի մէջ այս մասին որ եւ իցէ վարկ մը չէ պահանջած՝ սակայն ամէն պարագայի մէջ կը յուսացուի որ Պատրիարքարանի կատարած դիմումները արդիւնաւոր ըլլան, և օրինական հանգամանք ստացած այս սովորութիւնը անթերի պահուի, հետեւաբար այս գընէն ալ առողջ մը կը առաջի վրա կը կապահաներու և Երեսփոխանական ժողովոյ Դիւնադպրին, ընդամէնը ամսական 2350 դրուշի յաւելմամբ այս խնայողութիւնը 4600 դրուշի իջած է։

Միւս կողմէ Քաղաքական ժողովոյ որոշմամբ՝ Նորին Ս. Օծութեան մինչեւ Յունիս վերջը 5000 դր.ի ամսական մ'ալ յատկացուելով — ենթադրելով որ Նորին Վեհափառութիւնը Յունիսի վերջերը մեկնի աստի և մինչեւ նոյն ամիսը նոր Պատրիարքի մը ընտրութիւնն ալ չկատարուելով Տեղապահ Սրբազնը մնայ — այս խնայողութիւնը ներկայ շրջանին համար 44,050 դր. պիտի ըլլայ։

Հստ այսմ արդի կացութեան մէջ այս գլուխը 1909ի համար հետեւեալ կերպով կը հաստատուի։ Դր.

Նորին Ս. Օծութիւն կաթողիկոս, Տեղապահ, Պատրիարք և Փոխանորդ 89250 Դիւնադպրինաց պաշտօնեայք (տե՛ս ցանկ թիւ 4) 223800 Բարապանք և Դունապան դր. 39000 Սենեկապանք » 23700 Մարգարեանի հանգըստեան թոշակ » 3600 66300 Տիգրան Արփիարեանի թոշակը Աղջ. ժողովոյ բաժնին անցած։ Համագումար դր. 379350

Անցեալ տարիներու միջիններուն հետադրամական ցուցակի համեմատ Աղջ. կեդր. Սնտուկի մինչեւ 31 Դեկտեմբեր 1906 ելից միջինը եղած է դր. 635,400։ Հստ թիւ 3 ցուցակի, 1909 ելեւմտական տարւոյ համար մեր առաջարկած վարկերու համագումարն է դր. 490,000, որուն մանրամասնութիւններն հետեւեալներն են։

1. Թուակներ։ — 1907 տարւոյ վերջը այս գլխուն միջինը 513,900 դր. եղած է. 1908ի առաջին կէսին վճարումները դր. 185,995, իսկ երկրորդ կէսինը 208,664, և ներկայ տարւոյ Յունուար և Փետրուար ամիսներունը 64,600 դր. եղած է։

Ա. — Նախ բացարձակապէս անհրաժեշտ կը նկատենք Պատրիարքարանի պաշտօնէու-

թեան աստիճանաւորումը (քենսիզար) և այս առթիւ անոր վերակազմութիւնը և թոշակներու քանակութեան ասհմանումը, յատուկ վարչական Յանձնաժողովոյ մը միջոցաւ: Պաշտօնէից մը քանիներու թոշակը անբաւական կ'երեւի, հետեւաբար յետ քննութեան յաւելումի պէտք կը տեսնենք:

Բ. — Բարապաններու և սենեկապաններու յատկացուած թոշակները, անոնց վճարուած հանդերձագինն և երթեւեկի ծախքերն ալ ի հաշիւ դնելով՝ բաղդատաբար մեծ է և կը կարծենք որ ասոնց թիւը պակասիցնելով կամ ուրիշ որ եւ իցէ կերպով զեղչ մը ձեռք կրնայ բերուիլ:

Առ այժմ թոշակներու յատկացեալ վարկը կը մնայ 379,350 դրուշ:

2. Յարաբերական ծախիւ. — 1907ի վճարումները եղած են մօտաւորապէս 42000 դր.։ 1908ի առաջին կէսին մէջ 18938, երկրորդ կէսին մէջ 24158, իսկ 1909ի Յունուարի և Փետրուարի մէջ 4010 դր.։ Վճարուած է:

Երբ քննենք այս հաշւոյն մանրամասնութիւնները՝ զարմանօք պիտի տեսնենք որ 1907ի մէջ հետեւեալ վճարումները եղած են.

Առաջին Գործակատարի երթեւեկութեան ծախը = դր. 10800

Բ. Գործակատարի երթեւեկութեան ծախը = դր. 2400

Գ. Գործակատարի երթեւեկութեան ծախը = դր. 1200

Պատրիարք Սրբազնի երթեւեկութեան ծախը = դր. 20400

Պայրամներու այցելութեան առթիւ նուելը = դր. 4000

Բարապանաց երթեւեկութեան ծախը և լուսավառութեանց ծախը = դր. 4200

Բայց այժմ բարեբաղդաբար այս ծախը գերու մեծագոյն մասը գոյութիւն ունենալէ դադրած է և Պատրիարքարանը միայն մէկ գործակատար մ'ունի որ ամսական որոշ գործար մը կը ստանայ իր երթեւեկի ծախը:

1908ի առաջին կէսին մէջ, ըստ նախորդ գրութեան՝ այս գլխուն ծախքը նոյնը եղած է, իսկ երկրորդ կէսին մէջ 24158 դր.ի բարձրացած է, որուն պատճառը նոր Պատրիարքի ընտրութեան առթիւ ընդունելութեանց և պաշտօնական այցելութեանց համար եղած բացարկի ծախքերն են:

Բատ այսմ, 1909ի համար հետեւեալ վարկերը որոշել հարկ դատած ենք.

Պատրիարքի երթեւեկութեան ծախը 9000

Գործակատարի » 2400

Բարապանաց » 3600

Նուել Պայրամներու առթիւ 1450

Անակնկալ 5000

Ընդամենը դր. 21450

3. Դիւանատուն. — Մինչեւ 1907ի վերջը այս գլխուն միջինը 24500 դր.ի չափ եղած է, 1908ի առաջին կէսին մէջ 11426, երկրորդ կէսին մէջ 24415, իսկ 1909ի երկու ամիսներուն մէջ միմիայն 3470 դր. ծախսուած է:

Առ այժմ թոշակներու յատկացեալ վարկը կը մնայ 379,350 դրուշ:

Այս վերջին տարուան մէջ գրական պիտոյից համար արուած դրամը 11853 դր.ի հասած է ընդդէմ 15000 դր.ի, նախորդ տարուոյ:

Այս հաշւոյն 1908ի երկրորդ կէսին մէջ 24415 դր.ի կարեւոր գումարի մը բարձրանալուն պատճառներն են.

Ա. — Սահմանադրութեան հոչակմամբ գործերու աւելնալը:

Բ. — Քաղաքական ժողովոյ որոշմամբ գաւառները զրկուած հրանգներուն հետագրով հաղորդուիլը, մինչդեռ ասկէ առաջ թղթատարութեան կը յանձնուէին:

Ա.րդ, այս գլխուն համար հետեւեալ վարկերը բաւական կրնան նկատուիլ.

Թղթատար և հեռագիր դր. 9000

Գրական պիտոյք » 15000

Ընդամենը դր. 24000

4. Բնակութիւն. — Նախորդ տարիներու միջինը 21000 դր. եղած է, 1908ի առաջին կէսին մէջ 2820 և երկրորդ կէսին մէջ 8254, իսկ 1909ի երկու ամիսներուն մէջ միմիայն 600 դր. ծախսուած է:

Այս հաշւոյն համար 1909ի ընդունուած վարկերը հետեւեալը են.

Փայտ 100 չէքի և փայտածուխ 5000 օխա դր. 4500

Խաճիւ (168 օխա) և շաքար և զանազան ուրիշ գնումներ դր. 3700

Նորոգութիւն և կահաւորում » 4000 Ընդամենը դր. 12200

5. Զանազանէ, հանդերձագին եւ նրանի ծախի. — Վերջին նախատեսութիւնը 29000 դր. եղած է, 1908ի առաջին վեց ամիսներուն մէջ 18622, երկրորդին 18772, իսկ 1909ի երկու ամիսներուն մէջ միմիայն 3470 դր. ծախսուած է:

Անցեալ տարուան ելից առաւելութիւնը՝ Գանտիլիի մէջ եկեղեցապատկան գեանի մը սեփականութեան դատին ծախուց վճարումն յառաջ եկած է. Պատրիարքարանը Եկեղեցւոյն իրաւանց պաշտպանութեան գործին մէջ թերացած ըլլալով՝ դատը կրոնցուցած է:

Ուստի վերջինեալ գումարը զեղչելէ ետք՝ այս հաշւուը կը մնայ 32480 դր. որ կը բաղկանայ հետեւեալներէ.

Ա. — Բարապանաց և սենեկապանաց ամբն ամրի տրուիլը սովորութիւն դարձած հանդերձագին, մօտաւորապէս 10810 դրուշ:

Բ. — Պատրիարքարանի համար եղած զանազան գնումներէ. (որք անխափի թէ՛ այս և թէ բնակութեան գլխուն մէջ կ'անցուին):

Գ. — Նշանի խաչերու շինութեան ծախը 2659 դրուշ:

Դ. — Եւ վերջապէս վճարուած նուէրներ և ասսանորդներ: Կը կարծենք որ ծախուց այս գլխուն մէջ ալ բաւական զեղչեր կը ընալայ ձեռք բերուիլ եթէ.

Ա. — Բատ մեր առաջարկութեան, նշանի և պատագրութեան հասութիւց մասնակցութեան վերջ տրուի:

Բ. — Փոխան խաչի աւելի նպատակայարմար և աման եղող Պատրիարքական օրնագիր տրուի: Գաւառներու մէջ խաչ տալու սովորութիւն չկայ:

Գ. — Փարապանաց հանդերձեղինաց խընդիրը յետ քննութեան տարբերեր կը կրագուլ մը կարգադրութիւնը: Սա ալ աւելցնենք որ թէ բնակութեան մէջ հանդերձագին համար վճարուած գումարները 10810 դր.ի բարձրացած են, բայց սովորական միջինը 7000 և 7500 դր.ին մէջն է:

Ամէն պարագայի մէջ, փոքր ինչ խնայողութեամբ այս գլխուն համար ալ 29,000 դր.ի վարկ մը կ'անցած է որ 1908 Դեկտեմբերի վերջերը Պատկ. Փողովոյդ որոշմամբ՝ նպաստից Յանձնաժողովովէն փոխ առաջնութեան 500 ոսկիի գումարը եղած է 1909 Յունուարի փոխադրուած մնացեալ մասովը գոցուած է:

Զ. — Պատահականէ. — Համարակալութիւնը, հակառակ մեր փափաքանաց, այս վարկին պահպանումը չկրացաւ արդարացնել, և ըստ այնմ զայն փոխադրելով յարաբերա-

կան ծախուց հաշւոյն՝ ջնջեցինք այս գլուխը և անդը կ'առաջարկենք Ազգային ժողովով առաջարկեցնելու վերացնել: Անցեալ տարուան ելից առաւելութիւնը՝ Գանտիլիի մէջ եկեղեցապատկան գեանի մը սեփականութեան դատին ծախուց վճարումն յառաջ եկած է. Պատրիարքարանը Եկեղեցւոյն իրաւանց պաշտպանութեան գործին մէջ թերացած ըլլալով՝ դատը կրոնցուցած է:

4. — ԵԶՐԱԿԱՑՈՒԹԵԱՆ

1907 և 1908 տարուոյ համար սահմանած վարկերը և նախատեսուած հասութիւնները ժամանակին ծրագրուած ըլլալով հանդերձ չկրցինք ձեռք անցընել, և գտնուածներով բաւականացանք ու հակառակ պիտածէի պարապատութեան մասին ընդունուած առողութեան և կանոնին, մեր հետազոտութեանց մեծ մասը ելից և մտից իրականացած արդեանց վրայ հիմնելով խմբագրեցինք 1909 տարուոյ Պիտածէի ներկայ նախագիծը:

Առանց սահմանաեալ վարկերու՝ 1908 տարուոյ Ազգ. Պատրիարքարանի ծախուց համագումարը եղած է 522064

Մինչդեռ իրականացած հասութիւց համագումարը եղած է 469572

Որով դր. 52492

Պրուշի բաց մը գոյացած է որ նպաստից և զանազան աւանդներու անցած դրամներով գոցուած է:

Իր տեղեկութիւն կը նշանակինք աստ որ ներկայ տարուոյ Յունուար և Փետրուար ամիսներու ծախուց գումարը եղած է 73970

Իսկ նոյն ամիսներու մտից գումարը » 46393 27577

Պրուշի բաց մը գոյացած է որ 1908 Դեկտեմբերի վերջերը Պատկ. Փողովոյդ որոշմամբ՝ նպաստից Յանձնաժողովովէն փոխ առաջնութեան 500 ոսկիի գումարը եղած է 1909 Յունուարի փոխադրուած մնացեալ մասովը գոցուած է:

Գալով 1909ի ընդհանուոր Պիտածէին (Յունուարի և Փետրուարի հաշւուները մէջը ըլլալով) ըստ թիւ 3 հաշւուեկամի մեր սահմանել առաջարկած վարկերու համագումարն է 490000

Իսկ նախատեսեալ հասութիւց գումարը 410000

Որով ներկայ տարուոյ բացն ալ կը յանդի գայն փոխադրելով յարաբերա-

Այս բացէն զատ, Պատրիարքարքարանը երե-
րուն պարտք մ'ալ ունի, զոր Խորհուրդն իր
քննութեան առարկայ ըրած է և ի մօտոյ
արդիւնքը պիտի ներկայէ:

Իրաց վիճակը այս ըլլալով՝ վերոյիշեալ
բացը գոցելու համար, ինչպէս ներկայ տե-
ղեկագրին մէջ ցոյց տրուած է՝ եթէ Ազգ.
տրոց նոր բաշխում մը տեղի ունենայ և կա-
նոնաւորուի անոնց գանձումը, և ջանքեր
ի գործ գրուին, Պիտանէին մէջ այս հաշւոյն
նախատեսուած 80,000 դրւ.ի հասոյթը կըր-
նայ 160,000ի բարձրանալ և գոցուիլ ելեւ-
մտացոյցի բացը:

Ի գիմաց Տնտես. Խորհրդոյ
Վ. Անենադպրի Անենապես
Ե. Շիրինեան Գ. Գոհանիսչեան

28 Մարտ 1909

տեսական Խորհրդոյ գիտութեան և Քաղա-
քական ժողովոյ հաւանութեան, և Յունուար
15ն մինչեւ Դեկտ. 31 գանձուած հասոյթնե-
րը և ծախսուած դրամները կեղոնական
սնապուկին 1909 տարեշրջանի դրամական գոր-
ծառնութիւնները պիտի կազմեն:

Յօդ. 4. — Ծախուց համար սահման-
ուած վարկերը վերջնական ըլլալով, անոնցմէ
դուրս ինչ կերպով կամ անուամբ ըլլայ՝ ա-
ւելորդ ծախս չպիտի վճարուի, ոչ թոյլատ-
րուի մինչեւ իսկ եթէ կանխատեսեալ հասու-
թից վրայ առաւելութիւն մ'ալ ձեռք բեր-
ուած ըլլայ: Ոչ ելեւմտից Հոգաբարձութիւ-
նը և ոչ ալ Վարչութիւնը պիտի կրնան բա-
ցառիկ կամ աւելորդ ծախսներու վճարումը
թոյլատել կամ նոր վարկերու բայցման հրա-
ման տալ, առանց Տնտեսական Խորհրդոյ
քննութեան և որոշման, Քաղաքական ժո-
ղովոյ հաւանութեան, և Երեսփոխանսական
ժողովոյ հաստատութեան:

Յօդ. 5. — Գալիք տարեշրջաններու վե-
րաբերեալ ծախուց վճարումը բացարձակա-
պէս արգիլեալ է:

Յօդ. 6. — Տնտեսական Խորհուրդը 1909
տարւոյ պիտանէն հակակլոող ներկայ օրինա-
գըծին անթերի գործածութեան հսկելու պաշ-
տօն ունի:

Մանօք. — Նկատելով որ արդէն երեք
ամիս անցած են և մինչեւ ներկայ օրինա-
գըծին վաւերացումը կրնայ քիչ մ'ալ ժամա-
նակ անցնիլ, անցած ամիսներու համար ծախ-
սուած գումարները մէն մի գլխոյ համար
սահմանեալ վարկերէն զեղչուելով, մնացած
ամիսներուն համար վարկերու մնացորդ մա-
սը իր զօրութիւնը կը պահէ:

Յօդ. 3. — Ոչ մէկ պատճառաւ ծախուց
մէն մի գլխոյ համար յատկացեալ վարկէն
աւելի դրամ չպիտի ծախսուի, և ոչ ալ այս
տարուան վարկը նախորդ տարուան ծախուց
պիտի փոխադրուի. նմանապէս ծախուց մէկ
գլխէն տարբեր գլուխ մը ո եւ իցէ գումար
կամ վարկ չպիտի փոխադրուի, առանց Տն-

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԾԱԽՈՒՑ

ԳԼՈՒԽԻ ԾԱԽՈՒՑ	Մայիս՝ Տեղադրի 1906	Նախատես. Համարական Համարական պիտի թիվ	1908ի իրական ելք			Ելք 1909 թունվ-Փես.	Միջին Ընդհանուր	Տարբերութիւն		Դիտողի թիվ
			Ա. վեցամյաց	Բ. վեցամյաց	Համազումար			Առանձին	Չուզակ	
1. — Թուակներ										
Պատրիարք և Փոխանորդ	78000		185995	208664	394659	64600	431381		82519	
Դիւանք և Գրագիրք										
Բարապ. Դռնապ. և Սենեկապանք	435900	513900								
2. — Ցարաբերական										
Գործակատար և Պատր. Փոխանորդի ու բարապանաց երթեւեկ	42000		18938	24158	43096	4010	36385		5615	
3. — Դիւանատուն										
Թղթատար, Հեռագիր										
Դրական պիտոյք	24500		11426	24415	35841	1290	22694		1806	
4. — Բնակութիւն										
Փայտ, ածուխ եւայլն										
Նորոգութիւն	21000		2820	8254	11074	600	11891		9109	
5. — Զանազան										
Հանդերձագին										
Նշանի ծախս եւայլն	29000		18622	18772	37394	3470	29071	71		
6. — Պատահական										
Զանազան	5000		237801	284263	522064	73970	531422	71	99049	Զնօւած

golgotha
volume 002
version 001

ՆԱԽԱԳԻԾ ԵԼԵՒՄՏԱԿԱՆ 1909 ՏԱՐԵՐՁԱՆԻ ՊԻՒՏՃԵՒ

Մ Ո Ւ Տ Ք

Ե Լ Ք

ԳԼՈՒԽԻ ՇԱԽՈՒՑ	Ընդհ. Միջինք	Առաջարկեալ վարկ	ԳԼՈՒԽԻ ՀԱՍՈՒՑԻՑ	Ընդհ. Միջինք	Առաջարկեալ վարկ
Թուակներ. —			Ազգային տուրք	79917	80000
Ն.Ս. Օծութիւն, Պատր. Տեղապահ, Փոխանորդ Դիւանք և գրադիրք	89250 223800	379350	Մուգաթա	18134	20000
Մարդարեան (հանգստեան թոշակ)	3600		Դանչէլէր	23624	28000
Բարապանք, դռնապան, սենեկապանք	62700		Նշանախօսութիւն	{ 41650	25000
Յարաբերական. —			Հրամանի	18000	
Պատրիարքի, Փոխանորդի, Գործակատարի	11400		Առուծախ	143880	150000
Բարապանաց երթեւեկ և նուէրք	5050		Վաւերացմունք	16990	20000
Պատահական	5000	21450	Անցագիր	20484
Դիւանատուն. —			Պաշտօնաթուղթ	7464	6000
Թղթատար և հեռագիր	9000		Վագֆ	6905	9300
Գրական պիտոյք	15000	24000	Զանազանք	11288	7895
Բնակութիւն. —			Պետական շնորհ	104867	42105
Փայտ—ածուխ և զանազան գնումներ	8200		Զանազան հասոյթ (նուէրներ)	6144	3700
Նորոգութիւն և կահաւորում	4000	12200			
Զանազան. —			1909 տարւոյ բացը		
Հանդերձագին	7000				
Նշանի ծախք եւայլն	22000	29000			
Ազգ. ժողով. —					
Դիւանադպիր	12000				
Գրական պիտոյք և տպագրութիւն	12000	24000			
	531422	490000		481347	490000

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

Աղնուաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային երեսփ. ժողովոյ

Ազգային երեսփոխանական ժողովոյ Համարակալութեան Դիւանս պատիւ ունեցաւ ստանալու Ձեր Յուլիս 6 թուակիր պաշտօնագիրը, որով Ազգ. երեսփ. ժողովոյ որոշման համաձայն, Դիւանիս նախաքննութեան կենթարկէիք Ազգ. Կեդր. Սնտուկի 1909 ընթացիկ տարեշրջանի ելմտացոյցը, հանդերձ յարակից թղթածրաբով։

Դիւանս յաջորդական քանի մը նիստերու մէջ մանրամասնորէն ուսումնասիրեց Տնտեսական Խորհրդոյ պատճառաբանեալ տեղեկագիրը, ելմտացոյցի նախագիծը, յարակից օրինագիծն ու բաղդատական ցուցակները։ Տնտեսական Խորհրդը, իր պատճառաբանեալ տեղեկագրով, որ ինքնին խղճամիտ աշխատութիւն մ'է, Ազգ. Կեդր. Սնտուկի հասոյթի տասներեք աղբիրներէն 410,000 դր. մուտք և ծախուց վեց գլուխներուն համար ալ 490,000 դր. ելք կ'ենթագրէ և ըստ այսմ ներկայ 1909 ընթացիկ տարւոյ հաշուեկիրու կամ ելմտացոյցը սահմանելով, 80,000 դր. ի բաց մը կը նախատեսէ։ Իր այս եղրակացութեան յանձնելու համար, ենթադրական թուանշաններով չի շատանար, այլ կը ջանայ իր գումարները հիմնել հաստատուն իրարիսիններու վրայ, այն է՝ 1897էն մինչեւ 1906 գրեթէ տասն և մէկ անցեալ տարեշրջաններու ծախուց և հասութից բաղդատական գումարներուն վրայ։ Իսկ նախատեսած 80,000 դր. ի բացը գոցելու համար կ'առաջարկէ ազգ. արոց նոր բաշխում մ'ընել, անշուշտ ըստ տրամադրութեանց Ազգ. Սահմանադրութեան, բաշխման հիմ բանելով անձնիւր անհատի նիւթական կարողութիւնը, ինչպէս նաև ազգ. արոց գանձումը կանոնաւորել, որմէ իրաւամբ կ'ակնկալէ թէ Ազգ. արոց գլուխէն նախա-

տեսուած 80,000 դրուշի հասոյթը շատ դիւրաւ կրնայ 160,000 դր. ի բարձրանալ և հետեւապէս ելմտացոյցին բացը գոցել։ Համ որում Ազգ. Կեդր. Սնտուկի հասոյթի տասներեք աղբիւրներուն մէջ, ազգային տուրքն է ամէնէն ուղղակի և ամէնէն հաստատուն հասոյթը, զի իրաւանց և պարաւոց հաւասարութեան սկզբունքով՝ ամէն վաստակաւոր հայ անհատ պարտաւոր է մամնակցիլ ազգային ծախուց, այն է՝ Ազգ. Պատրիարքարանի ընդէ. ծախուց, ազգ. արոց նոր բաշխման համար Տնտեսական Խորհրդոյ բերած առաջարկը շատ բանաւոր կը թուի մեզ և ենթապէս արժանի՝ Պատկ. ժողովոյդ անմիջական նկատառման։

Հասոյթի միւս աղբիւրներուն բարգաւաճման համար Տնտեսական Խորհրդոյ ըրած թելադրութիւնք ու առաջարկութիւնք եւս արդարեւ բանաւոր են։ Ի մէջ այլոց, «Մուգաթա»ի և «Քանչէլէր»ի տուրքերուն համար եթէ նոր ու արդար բաշխում մը կատարուի՝ իւրաքանչիւր գաւառի և թաղի նիւթական կարողութեան համաձայն, այդ երկու գլուխներէն եւս հասոյթի նոր առաւելութիւն մը անյուսալի չէ, մանաւանդ եթէ գանձումները կանոնաւորուին անձնիւր առաջնորդարանի կամ Թաղ. Խորհուրդի վըրայ աւագ պարտաւորութիւն գրուելով, որպէս զի ելմտական ընթացիկ տարւոյն մէջ իսկ, որոշ վճարուերով հատուցանեն իրենց պարտքը։

Անցնելով ծախուց վեց գլուխներուն, Տնտեսական Խորհուրդը ջանաշած կը թուի՝ զանոնք իրենց նուազագոյն չափին վերածելու, և ի մասնաւորի յարաբերական ծախուց գլուխը գրեթէ կէս առ կէս զեղչած է։ Նախորդ տարեշրջաններուն, յարաբերական ծախուց մէջ տեղի ունեցած շուայլութիւնք, աւելորդ է ըսել, պարզապէս արդիւնք էին վարչական այն անպատճականապու դրու-

թեան, որ մեր Պատրիարքարանի մէջ եւս
կը տիրէր իր յոռի արդիւնքներով։ Այդպիսի
շուայլութիւնք այլ եւս գոյութեան իրաւունք
չունին, և հետեւապէօ կատարուած զեղչը
բանաւոր կը գտնենք։

Թէեւ Ազգ . Պատրիարքարանի Դիւանա-
տանց պաշտօնեաներէն իւրաքանչիւրին ամ-
սաթոշակը 1909 տարւոյ նախատեսեալ Ելմը-
տացոյցին մէջ մանրամասնուած չերեւիր ,
բայց և այնպէս կը կարծենք թէ Ազգ . Պատ-
րիարքարանի պաշտօնէութեան նո՞ր վերա-
կազմութեամբ կարելի պիտի ըլլար նոր իւր-
նայութիւն մը ձեռք բերել , ինչպէս որ 1908
տարեցրանի Յուլիս 11էն ասդին , մէկ քանի
պաշտօնեաներու դադարիմամբ ամսական կա-
րեւոր գումար մը խնայուած է : Անշուշտ
այս նպատակաւ է որ Տնտեսական Խորհուր-
դը հարկ անհրաժեշտ դատած է Ազգ . Պատ-
րիարքարանի պաշտօնէից աստիճանաւորումը ,
վերակազմութիւնն ու Թոշակներու քանա-
կութեան առհմանումը : Տնտեսական Խորհր-
դոյ այս առաջարկը արդարեւ արժանի է
Պատ . Քաղ . Ժողովոյ լուրջ նկատառման ,
ոչ միայն խնայողութեան տեսակէտով , այլ
մանաւածդ աշխատութեանց կանոնաւորման
տեսակէտով , և հետեւապէս կը յուսանք որ
առաջարկուած Վարչական Յանձնաժողովին
կազմութիւնը պիտի փութացնէ , յառաջիկայ
տարեցրանի ելմտացոյցին պատրաստութենէն
առաջ , այս կարեւոր գործը ի գլուխ հանե-
լու համար :

Համարակալութեան Դիւանս, իբրեւ ար-
դիւնք իր քննութեանց, սա՛ եզրակացու-
թեան յանգեցաւ թէ 1909 ընթացիկ տարե-
շը՞ անի համար պատրաստուած ելմտացոյցն
ու օրինագիծը կրնան նոյնութեամբ ընդուն-
ուիլ, քանի որ արդէն գործադրութեան մէջ
են, և ելմտական տարին ալ վերջանալու
մօտ, արով անժամանակ է ո եւ է փոփօխու-
թիւն ներմուծել անոր մէջ։ Այսու հանդերձ
կը յուսայ թէ Տնտեսական Խորհրդոյ թելադր-
ութիւնք և առաջարկութիւնք, եթէ ըն-
դունուին և ի նկատ առնուին, յառաջիկայ
տարեցանի համար աւելի կշռուած ու հաս-
տատուն ելմտացոյց մը կրնայ պատրաստուիլ
մանաւանդ որ ներկայ ընթացիկ տարեշը անի
իրականացած ելմտացոյցը պիտի դիւրացնէ
այդ գործը։

Տնտեսական Խորհրդոյ կողմէ պատրաստուած ելմագոյցը Պատկ. Ժողովոյդ վաւե-

բացման ներկայացնելու առթիւ Քաղ. Ժողովոյ ուղղած պաշտօնագիրը, Ազգ. սահմանադրական կեանքի տարեգրութեանց մէջ, այդ աշխատութիւնը առաջինն հոչակելով հանդերձ, կը յայտարարէ թէ ներկայացուածը

ո՞չ թէ ընդհ. Ելմոտացոյցն է, այլ անոր մէկի մասը միայն, այն է՝ պարզապէս Ազգ. Պատրիարքարանի մտից ու ծախուց մէկ սահմանափակ նախահաշիւը, որ իր մէջ չի բովանդակեր, Կ'ըսէ, Ելեւմտից Հոգաբարձութեան պարտականութեանց և իրաւանց սահմանին մէջ գտնուած տրամադրութիւնները, Ազգ. Սահմանադրութեան 49րդ յօդուածին համաձայն, ո՞չ ալ Տնտեսական Խորհրդոյ իրաւանց ու պարտուց վերաբերեալ արամադրութիւնները, 46րդ յօդուածին համաձայն : Քաղ. Ժողովը, առաջին տեսութեամբ իսկ, իրաւունք ունենալ կը թուի, երբ մանաւանդ Ազգ. Սահմանադրութեան որոշ արամադրութիւններ ի մէջ կը բերէ, արամադրութիւններ, որոնց մեծ մասը երկար տարիներէ ի վեր անգործադրելի մնացած են : Ելեւմտից Հոգաբարձութիւննը, որուն պաշտոնն է Ազգ. Կեդր. Սնառուկի Տնտեսութիւնն ու համարակալութիւնը, երկար տարիներ գոյութիւն իսկ չէ ունեցած : Ազգ. Սահմանադրութեան որոշ արամադրութեանց համաձայն, Ելեւմտից Հոգաբարձութիւնն է որ Պատրիարքարանի ամէն հասոյթները պիտի հաւաքէ և իր ձեռքով իսկ պիտի ընէ բոլոր ծախքերը, անուած Տնտեսական Խորհրդին գիտութեամբ

և Քաղ. Փողովայ հաւանութեամբ. բայց ի-
բականին մէջ այդպէս եղած է և այդպէս
Կ'ըլլա՞յ տակաւին այսօր։ Իսկ Տնտեսական
Խորհուրդին պաշտօնը, 46րդ յօդ.ի բացորոց
տրամադրութեանց համաձայն, Պոլսոյ մէջ
գտնուած Ազգ. բոլոր հաստատութեանց և
անոնց կալուածներուն մատակարարութեան
ընդհանուր տեսչութիւնն է։ Ներուի մեզ
հարցնել թէ իրականին մէջ Տնտեսական Խոր-
հուրդնե՞րն են որ իրենց ընդհ. տեսչութեան
տակ կը մատակարարեն Ազգ. բոլոր հաստա-
տութիւնները։ Տնտեսական Խորհուրդին ի-
րաւասութեանց սահմանին մէ՛ջ է նաեւ Ելեւ-
մտից, Կտակաց և Հիւանդանոցի Հոգաբար-
ձութիւններուն, ինչպէս նաեւ Թաղ. Խոր-
հուրդներու մատակարարութեան վրայ հրս-
կողութիւն կատարել, և որու ժամանակնե-
րու մէջ անոնցմէ հաշիւ պահանջել և Քաղ.
Փողովայ հազօրդել։ Եթէ չենք սխալիք,

վերջին 25-30 տարիներու ընթացքին մէջ չենք յիշեր Տնտես. Խորհուրդ մը որ որոշեալ ժամանակներու մէջ Ելեւմտից, Կտակաց և Հիւանդանոցի Հոգաբարձութիւններէն, ինչպէս նաև Թաղ. Խորհուրդներէն հաշիւ պահանջած և Քաղ. Ժողովին հաղորդած ըլլայ: Ազգ. հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան վրայ վերհսկողութիւն կատարելու իրաւասութեան կը պատկանին 4Ցրդ յօդուածին առաջին աշբամադրութիւնք, և ընդհ. ելմտացոյցին հետո եւ է առնչութիւն չունին: Իսկ Տնտես. Խորհուրդին բո՛ւն պարտականութիւնն է, ինչպէս Ազգ. Սահմանադրութեան 4Ցրդ յօդուածին վերջին պարբերութիւնը որոշապէս կը տրամադրէ, տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյ մէջ ըլլալիք (Կեդր. Մնտուկի կամ Ազգ. Պատրիարքարանի) հասոյթն ու ծախքը Ելեւմտից Հոգաբարձութենէն ստուգել, հաշուեկշիռ մը պատրաստել և Քաղ. Ժողովոյ ներկայել, ինչ որ ըրբած է Տնտես. Խորհուրդը, թէեւ շատ ուշ, անյօւշտ հարկեցուցիչ պատճառներով:

Մեր Ազգ . Սահմանադրութեան ողին
ի բնէ ապակեդրոնական ըլլալով , անձնիւր
թաղ կամ Թաղ . Խորհուրդ ի'նք կը մատա-
կարարէ իր հեկեղեցւոյն ու վարժարանին վե-
րաբերեալ Ազգ . Կալուածները , անշուշտ ո-
րոշ ժամանակներու մէջ համար տալու պայ-
մանաւ առ Տնտես . Խորհուրդն : Այս համա-
րատուութիւնը , ընդունուած սօվորութեան
համաձայն , ցարդ տեղի կունենար քառամ-
եայ պաշտօնավարութենէ վերջ : Սրդարեւ
փափաքելի է որ Տնտես . Խորհուրդը որոշ
ժամանակներու մէջ ի գործ դնէր իր համա-

Տպագրուած է ընդ հսկողութեամբ՝ Ազգ. Ժողովոյ Եղեցւմից Յանձնայիւրին :

Առենադպիր

Ամերիկա

፩. ፲፻፯.፭፬፯.፻

Ա. Յ. ԱՊՈՔԻՆ

ըառութեան իրաւասութիւնը, որով շատ մը
յոռի մատակարարութեանց առաջքը առած
պիտի ըլլար ժամանակին, և պիտի պարտա-
ւորէր Թաղ. Խորհուրդները՝ կանոնաւոր
մար ունենալու, կրկնատոմարի դրութեամբ:

Պատ. Քաղ. Ժողովին լայնօրէն ըմբռու-
նած ընդհ. ելեւմտացոյցը, ո՛քան ալ շահե-
կան ու միանգամայն շահագրգիռ, ցարդ
անիրականալի եղած է, և այսուհետեւ ալ
հաւանական չէ որ իրականալի դառնայ,
ցորչափ Ազգ. Սահմանադրութեան օրոց աը-
րամագրութիւնք ճշդիւ ու տառապէս չգոր-
ծալրութիւնն : Փափաքելի է արդարեւ որ յա-
ռաջիկայ տարւոյ համար Քաղ. Ժողովը հաճի
փորձ մ'ընել իր ըմբռնած եղանակաւ ընդհ. ։
Ելմտացոյց մը պատրաստել տալու, որ մեր
սահմանադրական կեանքի մէջ իրաւամը ա-
ռաջինը կրնայ ըլլալ և իրբեւ նախօրինակ
ծառայել յաջորդ ելմտացոյցներու : Ամէն պա-
րագայի մէջ, Պատ. Քաղ. Ժողովոյ շահեկան
պաշտօնագրիրը լուրջ նկատառման արժանի
կր նկատենք :

Հնդ գրոյս վերադարձնելով մեզ յանձնուած թղթածրաբը, որ վեց պաշտօնագրեր կո ապահովակեռ.

Մնամք խորին սպառանու

Այսպահ Համբարձումը եկանց Դիմումին

ԱՐԵՎԱ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ Օ ՏԻՉՈՒՅՆԻՒՅ

ԵԼԵԿՈՆԻՉ ԱՐ ՊՈԶԱՔԵՐՆ

19 Oct., 1909

Կառավարություն

12 *Ukrayins'kyi* 1909.



ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հմայեակ Եպիսկ. Դիմաբնան Ա. Ասենապես	Ստեփան հգ. Դարաեան Ա. Ասենապես
Մաղաֆիս » Տերութեան Բ. »	Յովսեփ » Եռուութեան Ա. Ասենադպիր
Դեկլ Ծ.Վրդ. Գալեմեարե. Ա.Ասենադպիր	Միհրան » Շիրիմեան Բ. »
Տաճաս Քահ. Փաշաեան Բ. »	Դեկրդ կգ. Թորզութեան
Արուքն Ծ.Վրդ. Վեհութի	Գրիգոր » Զօհրապ
Աքել Քահ. Երկցեան	Տօֆր. Կարապես » Եաղուապեան
Արիստակու » Հիսարշեան	Կարապես » Քերկորհմեան
Արիստակու » Ճիզմենեան	Համբարձում » Պօյանեան
Խորեկի » Յարութիմեան	Յակոբ » Գորեան
Յուսիկ » Քաջութի	Յարութիմ » Յովհաննեսեան
Սույիս » Պաղզմեան	Յամիրիկեան
Վահան » Խոյեան	Ուորքն » Փափազեան
Տրդաս » Պօյանեան	Տօֆր. Միմոն » Մեղքուեան
	Միքաս » Քեաթիսեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ստեփան հգ. Դարաեան Ա. Ասենապես	Ստեփան հգ. Դարաեան Ա. Ասենապես
Յովսեփ » Եռուութեան Ա. Ասենադպիր	Յովսեփ » Եռուութեան Ա. Ասենադպիր
Մաղաֆիս » Մասիս	Մահմադ Ծ.Վրդ.
Դեկրդ կգ. Դարաեան	Դեկրդ կգ. Դարաեան
Յովհաննեսեան	Յովհաննեսեան
Յամիրիկեան	Յամիրիկեան
Պաղզմեան	Պաղզմեան
Խոյեան	Խոյեան
Մեղքուեան	Մեղքուեան
	Քեաթիսեան

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒԹԻՒ ԵՒ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒ

- 1 Արիստակու հգ. Գալուստեան Ասենապես
- 2 Գրիգոր » Խճանեան Ասենադպիր
- 3 Տօֆր. Եղուարդ » Մասիս
- 4 Հայկ » Խօնասարեան
- 5 Մկրտչ » Նորիկեան
- 6 Յովհաննեսեան
- 7 Պետրու » Գարաեան

ՎԱՆՈՐՔԻՑ ԽՈՐՀՈՒԹԻՒ

(Կազմուած չէ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒ

- 1 Գալուստ հգ. Գույշումնեան Ասենապես
- 2 Անտոն » Թէկեան Ասենադպիր
- 3 Արամ » Թամբանեան
- 4 Բարսեղ » Աւետիսեան
- 5 Եղուարդ » Շիրիմեան
- 6 Միհրան » Մելքեան
- 7 Լեւոն » Տիմիրախանեան

ԵԼԵՒՄՏԻՑ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

(Կազմադեալ կ)

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒ

- 1 Յովհաննեսեան հգ. Մարգարեան Ասենապես
- 2 Գրիգոր ժահ. Ճեկանեան Ասենադպիր
- 3 Եղիազար » Պօղուեան
- 4 Հմայեակ » Էնիսիրմեան
- 5 Պետրու » Կարապետեան
- 6 Տօֆր. Միսամ հգ. Ճեկանիրմեան
- 7 Յակոբ » Պահրի
- 8 Յովհաննեսեան » Պառաւեան

ԿՏԱԿԱՑ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

- 1 Մաղաֆիս Եպիսկ. Տերութեան Ասենապես
- 2 Կարապետ հգ. Այճեան Ասենադպիր
- 3 Ղեւոնդ Ծ.Վրդ. Դուրեան
- 4 Միհրան ժահ. Աշճեան
- 5 Նշան հգ. Ստեփանեան
- 6 Վահան » Սուրենեան
- 7 Յովհաննեսեան » Խազուղեան

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
(Կերպարան կազմակերպութիւն սացած չէ)